




ԵՐԿՈՒ ԱՂԱՒՆԵԱԿՔ

Կ Ա Մ

ՀԱՄԲՈՐԴԵԼՈՒ ՄՈԼՈՒԹԻՒՆԸ

ԹԱՏԵՐԱԿԱՆ ԵՐԵՔ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ



Ա Ղ Ա Վ Ն Ք

Տ Ե Ս Ւ Լ Ա Ռ Ա Զ Ի Ն

ԿԱՍՏՈՆ 18 տարեկան փորագրել մը.
 ՊԱՒՂՈՍ Կապտոնի եղբայրը 14-15 տարեկան.
 Պ. ՏԻՒՐԻԷ փորագրել, ուսուցիչ Կաստոնի.
 ՔԵՐԿՈՒԼԵՑ Նաւապետ ժամ-Պարի.
 ԿԻՒՍՏԱՒ 18 տարեկան } ընկերը Պապոսի.
 ՎԻԿՏՈՐ 15 » }
 ՖՐԱՆՍՈՒԱ 16 » }
 ԲՈՆԱՐԴԻՆ Պանդոկապետ.
 ԱՆԻՐԷ Նաւաստի ժամ-Պարի.
 ՊԵՏՐՈՍ Ժառայ.
 ՆԱՒԱՍՏԻՔ ժամ-Պարի.
 ՓՈՐԱԳՐԻԶՔ Բարեկամը Կաստոնի.
 ՅԱՆՉԵԱԿԱՍԱՐ մը.

Բարեգաւ մէջ կը կատարուէ Ա. եւ Գ. Արարուած-
 ներոն տեսարանը, իսկ Բ. Արարուածը Տիւրի մէջ:

ԱՌԱԶԻՆ ԱՐԱՐՈՒԱԾ

ՄԵԿՆՈՒՄԸ

Սրահիկ մը. — Դսներ որունը աջակողմէն
 Կաստոնի գործատուներ կը հանեն, և ձախա-
 կողմէ Պապոսի սենեակն. — Դիմացը պատու-
 սան մը որ ձամբու վրայ կը նայի, ուր է և
 տան դռնը. — Բազմոց մը, կոյր սեղան մը,
 մի քանի արտաներ, և այլն:

Պ. ՏԻՒՐԻԷ, ԿԱՍՏՈՆ իր արուեստանոցէն ելնե-
 լով աչ կողմէն ներս կը մտնէ:

Պ. Տիւրի. — Ազնիւ պարոնիկ, ուրախակից
 եմ աշխատութեանդ համար որ լաւ յաջողած
 է: Այնպիսի ճշդութիւն մը կը գտնեմ այս
 զծագրութեան մէջ, որչափ յիշատի դեռ չէի
 սպասեր քեզմէ:

Կաստոն. — Չնր դասերը Պ. Տիւրի, ապար-
 դիւն երկրի մը վրայ չեն ցանուիր: Կը յու-
 սամ որ անկէ չահաւէտ արդիւնքներ առաջ
 գան յօգուտ աշակերտիս և պարծանք վար-
 ժապետիդ համար:

Պ. Տիւրի. — Սո՛ւ, այո՛, գու պատուաբեր պի-
 տի ըլլաս ինծի:

Կաստոն. — Անձիս վրայ իմ ունեցած վստա-
 հութիւնս կրնայ չափազանց երեւալ. բայց
 որքան մտքի և սրտի կարողութիւն ունիմ,
 զայն ուսման պիտի նուիրեմ, լաւագոյն վի-
 ճակ մը ձեռք բերելու համար՝ առաջիկայ
 մրցման ասպարէզին մէջ:

Պ. Տիւրի. — Սիրելի բարեկամ, սրտանց կը
 զովեմ այդպիսի տրամադրութիւններն: Սա-
 կայն չէի փափաքիր որ անով մեծամեծ յոյ-
 սեր զարթոնու ռուտոյդ մէջ, որունը կրնային
 ապա խիստ չափազանց և ունայն ակնկալու-
 թիւններ ծնանիլ. բայց վստահ եմ քու վրադ,
 քու աշխատութիւնդ, շանդդ, արիւթիւնդ,
 արդարեւ, արծանի են յաջողութեամբ պսա-
 կուելու:

Կաստոն. — Բու բարեսիրութիւնդ զիս կը քա-
 շալերէ: Թաշողութիւն, Պ. Տիւրի, յաջողու-

թիւն... Ո՛հ Աստուած իմ, միակ այդ մէջը...
ցը ունիմ փոխարինելու համար բոլոր թու
շանթերուդ և ճշմարիտ բարեկամութեանդ իմ
նկատմամբս:

Պ. Տիարթէ. — Միթէ՛ ամենաքաղցր փոխարեւ
նում մը չէ՞ այս. ճանշնալ ազնուական սիրտ
մը ինչպէ՛ս որ քուկդ է՝ սիրելիս...:

Կաստուն. — Այո՛, այդ պէտք է ըլլայ միակ հա-
րըստութիւնն երկուս որբերուս...:

Պ. Տիարթէ. — Ո՛հ, ինչո՛ւ ուրեմն Պաւղոսն ալ
քեզի չի նմանիր:

Կաստուն. — Նա դեռ երիտասարդ է...:

Պ. Տիարթէ. — Խեղացի և վառվառն տղայ մ'է,
բայց...:

Կաստուն. — Այդ՝ քիչ մը զուցէ իմ յանցանքս
ըլլայ... Ես շատ թոյլ գոհուեցայ, և պէտք
եղածին չափ՝ անոր վրայ չհակեցի: Վտան-
գաւոր ընթերցումներ և քանի մը վատ ծա-
նոթութիւններ մի քիչ անոր միտքը խանգա-
րեցին:

Պ. Տիարթէ. — Աւագ թշուառութեանս...:

Կաստուն. — Ո՛հ, բայց ապահով եղիր, նա պի-
տ ուղէ՛ իր պատահական սխալմունքը: Կը
յուսեմ որ Երկինք աղօթքս լսելով՝ պիտի
զօրացնէ իմ ջանքերս, գինքը այն գէշ ճամ-
բէն հոտ կեցնելու:

Պ. Տիարթէ. — Յետեութիւն, ուրեմն սիրելի
Կաստուն... աշխատութիւն և արեւութիւն:
(Կաստունի ձեւքը կը սեղմէ և. ցոյսս կ'ընէ):

ՏԵՍԻԼ ԵՐԿՐՈՐԴ

ԿԱՍՏՈՆ միայն.

Ո՛ր մնաց ուրեմն Պաւղոս... Շատ անգամ գնա-
լիս դուր գարնելու, պատասխան չտուաւ:
Երէկ իրիկուն իրեն մի քանի դիտողութիւն-
ներ ըրի, և այսօր նա ինձ երես կը թթուցը-
նէ: Թերեւս սիրող ցաւոցոցիւ բայց ինչ ընեմ,
ստիպուած եմ այդ բանին: Պարտական չե՛մ
միթէ՛ հօր տեղ բռնելու: Նա իր կրակոտ ե-
րեւակայութեամբն աշխարհի վրայ նորօրինակ
զաղափարներ յղացած է: Համարողել, երկիր-
ներ տեսնել, բախտախնդրութեանց ենթար-
կուիլ, ահա իրեն մտածութիւնները: Պէտք
չէ՞, ուրեմն, որ անվրդով և լուրջ մտքով՝ դի-
մադրեմ իր այս յիմար մտածութեանը: Իմ
պարտքս չէ՞ գինքն առաջնորդելու իր ապա-
գային համար աւելի խոհական և օգտակար
ճամբուն մէջ... Եւ եթէ կամք ունենայ, ինքն
ալ ինձ հետ շատ երջանիկ կրնայ ըլլալ: (Կը
մտնենայ Պաւղոսի սենեկին, ձուլու կողմէն):
Բայց, կարծեմ ներսն է, ծայր կը լսեմ իր
սենեկին մէջ... առաջին դիմողը ես չըլլամ...
հոգ և՛ որ սպասեմ իրեն... Ահաւասիկ ինքը:
(Պաւղոս սենեկէն կ'ընէ):

ՏԵՍԻԼ ԵՐԿՐՈՐԴ

ՊԱՆՂՈՍ և ԿԱՍՏՈՆ

Պաւղոս. — Ես եմ, Կաստուն, դու՛ դեռ նեղա-
ցնր ես...:

Կաստուն. — Ինչո՛ւ պատասխան չտուիր, երբ
այս առաւօտ քեզ կանչեցի:

Պաւղոս. — Իրօք, կանչեցի՛ր զիս...:

Կաստուն. — Անտարակոյս, դու լաւ գիտես
զայն:

Պաւղոս. — Ի՛նչպէս կրնա՞ գիտնալ... ահա
դեռ այս վարկենիս մուն դարձայ:

Կաստուն. — Տուն դառնալ... ուրեմն դու դուրս
ելած էիր:

Պաւղոս. — Այո՛, գործերու պատճառաւ:

Կաստուն. — Ա՛հ, պարտքը գործերով համար
դուրս ելած էր:

Պաւղոս. — Խիստ կարեւոր գործեր:

Կաստուն. — Զե՛մ տարակուսիր... Կարելի՞ է
գիտնալ թէ՛ ռորնք են այդքան կարեւոր գոր-
ծերը...:

Պաւղոս. — Ո՛հ, Աստուած իմ, եղբայր, դու
իմ ճաշակս գիտես, տեղափոխութիւնը անհրա-
ժեշտ պէտք մ'է ինծի համար: Այս նպատա-
կաւ, շատ օրերէ ի վեր քեզմէ՛ զաղտուկ, ո
և է շրջող գրագրի մտաշտոն ձեռք բերելու
հետամուտ էի: Այս առաւօտ այդ գործին հա-
մար ժամարիւր եղած էինք, հեն գնացի, այ-
սօր իսկ որդուած է ինձ համար պաշտօնա-
տեղին գտնուիլ:

Կաստուն (անարգիւած). — Քու պաշտօնատեղիդ,
պարտն, հոս չէ՞ ուրեմն՝ թու եղբորդ քով:

Պաւղոս. — Ահաւասիկ դարձելու կը զայրանաս:
Ասկայն բրածս իրաւացի չէ՛: Միթէ՛ օրինա-
ւոր չէ՞ իմ տարիքին մտածելի՛ գիտ լաւ վիճա-
կի մը մէջ դնելու:

Կաստուն. — Միթէ՛ չունի՛ս զայն՝ փորագրու-
թեան արուեստին մէջ ալ:

Պաւղոս. — Գեղարուեստի վիճակը ինծի համար
չէ՛:

Կաստուն. — Որովհետեւ չափազանց աշխատու-
թիւն կ'ուզէ անիկայ, այնպէս չէ՛:

Պաւղոս. — Ո՛չ, այդ չէ պատճառը, ես ճամ-
բորդել կ'ուզեմ:

Կաստուն. — Խեղճ Պաւղոս, դու մեծապէս կը
կեղեցեց տեսնու...:

Պաւղոս. — Ո՛հ, կ'աղաչեմ Կաստուն, մի՛...:

Կաստուն. — Մի՛ կարծիր թէ՛ նորէն սկսիմ քեզ
հետ վիճաբանութիւն մը որ ինձ անօգուտ
կ'ընի:

Պաւղոս. — Ստոյգ է. թու դիտողութիւններդ
ոչ մի կերպով չեն փոխիր միտքս, անեղք
պատճառ միայն կ'ըլլան մեր մէջ կոխը նո-
րոգելուն: Եղբայր, քեզ շատ սիրելու հա-
մար չեմ ուզեր բնաւ որ ստիպուիմ հետդ նե-
ղուած ըլլալ:

Կաստուն. — Շատ լաւ, ալ չստիպեմ անոր վրայ.
հիմա՛ ես բարեկամիս մէկուն տունը յիսի
երթամ զձագարութիւն մը գննելու համար, և
որպէս զի գինքը գտնեմ, պէտք է անմիջապէս
մնչկիմ:

Պաւղոս. — Շատ լաւ, եղբայր, գնա՛:

Կաստուն. — Կը խոտանամ մինչև դարձս
լըծօրէն մտածելու անոր վրայ:

Պաւղոս. — Ի՛նքէ՛ քեզ հաճոյ է՛ կը խորհիմ,
Կաստուն, բայց անկողնիսկալ հոգով:

կառուցել... — Յստակաբար Պապարտ... քիչ ժա-
մանակէն (կը մեկնի):

ՏԵՍԻԼ ԶՈՐՐՈՐԻ

ՊԱՆՈՐԱՄ ԴԻՄԻՏ

Այս սիրելի եղբայր... և սակայն բարի է նա,
և արդէն ցանկով կը բաժնուիմ անկէ...
Վաճառատուն մը պէտք ունի երիտասարդ-
ներու՝ իր ապրանքները գաւառներու մէջ տա-
րածելու համար: Բաղդատը գործ մը, որմէ
ստալ է եկած շահերը պիտի բաժնեմ կիւստա-
ւի և քանի է բարի ընկերակիցներու հետ
խոստացաւ նա փութով անոր նկատմամբ տե-
ղեկութիւն բերելու ինձ: Որքան ազնիւ բա-
րեկամ... Թէ խեղ բանեցնէ հիմար գալ մինչ
եղբայրս բացակայ է... Ինքն է արդեօք, սա-
ղուխէն ելնելու ծայն կը լսեմ: Կիւստա-
գործար դրամ բացառածքէն ներս կը մտնեմ,
կեցցէ՝ ճիշդ ինքն է:

ՏԵՍԻԼ ՀԻՆԳԵՐՈՐԻ

ՊԱՆՈՐԱՄ, ԿԻՆՍԱՍ, յետոյ ՎԻՍՏՈՐ և ՖՐԱՆՍՈՐԱ

Կիւստա... (դռնէն) — Դու մինակ ես Պապարտ...
Պապարտ... — Այո, կը տեսնես:

Կիւստա... — Քանի որ եղբայրդ հոս չէ, մեր
ընկերներն ալ ներս կը բերեմ... Ո՛ն, դուք
ալ մտէք, (Վ. իկտոր և Ֆրանսուա կը մտնեն):

Պապարտ... — Որքան բարեկամք, պատրաստ ենք
ճամբայ կենելու:

Վ. իկտոր... — Ամենքս ալ պատրաստ ենք:

Ֆրանսուա... — Զօրեղ ենք ճամբուն ամեն դը-
ժուարութեանց յաղթելու:

Վ. իկտոր... — Ապրիլեանը նայէ՛... հապա եր-
կաթուղին...:

Ֆրանսուա... — Իրաւ, անոնք ձեռք համար չի-
նուած չեն:

Կիւստա... — Լուսինն, որոշուած է որ կը
ճամբորդենք վաճառատան մը օգտին համար:
Եւ որովհետեւ մինակ ըլլալու բաղդն ունինք,
և ո՛չ ոք մեր խօսածը կը լսէ, խորհրդակցիւք
երթալիք տեղերնուս վրայ: Բանակցութիւնը
սկսուած է, Պապարտ խօսքը տուկէ չէ:

Պապարտ... — Կը սպասեմ որ նախ դու կարծիք
մը յայտնես:

Կիւստա... — Ինծի համար, բարեկամք, պիտի
խոստովանիմ որ ես հեռաւոր ճամբորդութեան
կողմն եմ: Փաղղորի ծովեզնդիքն վրայ միայն
կրնամ ազատ շուէ մը առնուլ: Կը սիրեմ
Հաւրը, Թրուիլ, Տիբե, ախորժիւլ է ինձ ծո-
վը իր ընդարձակ հորիզոնովը, ծովը իր լեւ-
նակուտակ ալիքներովը և իր փոթորիկներովը:
Պապարտ... — Այո, կեցցէ՛ ծովը, կ'ընդունիմ ար-
դար առաջարկդ կարծիքը:

Վ. իկտոր... — Ստոյգ է, Կիւստա հիանալի գա-
ղափար մ'ունի:

Կիւստա... — Իմ կարծիքներս միշտ յարգուած են:
Պապարտ... — Անշուշտ պատուոյ և լաւութեան
ճամբայն երբեք ձեռքէ պիտի չթողունք: Ա-
ռանց այս պայմանին, բացէ՛ ի բաց ձեռք կ'ը-
սեմ որ մասնակից չեմ ըլլար:

Վ. իկտոր... — Նոյն է ամենուս կարծիքն ալ:
Ֆրանսուա... — Որոշուած է, ուրիշն, ամեն բա-
նէ առաջ պատեր:

Կիւստա... — Լուսինն... ընկերութիւնը կազ-
մուած է, և ես ամենուս պաշտօնը պիտի ու-
րոշեմ և իւրաքանչիւրը իրեն յանձնուած դե-
րին համաձայն պիտի գործէ:

Ֆրանսուա... — Զարմարած եմ:

Վ. իկտոր... — Եւ վստահը հաւասար կերպով
ընկերութեան պիտոյից համար պիտի գործա-
ծուի:

Կիւստա... — Կ'ընդունիմ բարեկամք Պապարտ,
գեղեցիկ գիր ունի և լաւ հաշուազէտ է, թող
ինքն ըլլալ գանձապետին և ընկերութեան
հաշիւները բռնող:

Պապարտ... — Սիրով յանձն կ'առնում զայն...
բայց այս բաւական չէ: Պէտք է լուր տամ
եղբորս իմ մեկնելու համար: Այս մասին,
Կիւստա, խօսած է ինք որ վաճառատան մը
մէջ պաշտօն պիտի ունենայի, արդ՝ այդ պաշ-
տօնը...:

Կիւստա... — Ո՛, այո, յանձնակատար մը քե-
զի պիտի բերէ, Հաւրի մէջ գտնուող վաճա-
ռակահի մը նամակը, որով կ'ընդունի Քու-
ժառայութիւնը իր վաճառատան մէջ:

Պապարտ... — Այդ նամակը ընդունելու՝ անմի-
ջապէս ճամբայ կ'ելնեմ և մեզի ասպարէզ կը
բացուի:

Կիւստա... — Կամացուկ, վերջին խօսք
մը: Ժամը չորսին, երկաթուղու կայարանին սըր-
ճարանը, և ամենքս ալ հոն գտնուինք (ե-
րեքը կը մեկնեն):

ՏԵՍԻԼ ՎԵՅԵՐՈՐԻ

ՊԱՆՈՐԱՄ յետոյ ԿԱՍՏՈՐ

Պապարտ... — Վերջապէս իմ փափաքանացս ծա-
րը հասած եմ: Ասպարէզը առջեւ կը բացուի,
ազատ պիտի ըլլամ, կարող ուր որ ուզեմ ա-
զատութեամբս երթալ, և ծովը պիտի տես-
նեմ... (հասկնով յաղմոցիկ վրայ, ոտի գիրք
մը կ'սաննու): Կ'ըսեն թէ շատ գեղեցիկ է ծո-
վը... ահաւասիկ, ճամբորդութեանց պատ-
մութիւնը... Մտոցայ այս գիրքը Կիւստաին
կարձուցնելու... Ո՛հ ճամբորդութիւն, ճամ-
բորդութիւն... Ես ալ պիտի ընեմ և ի դար-
ձի՞մ կարող պիտի ըլլամ զանոնք պատմել:
Ես ալ իմ յուշատետքս պիտի ունենամ, ուր
պիտի նշանակեմ կէտ առ կէտ իմ արկած-
ներս, և անշուշտ գեղեցիկ նիւթեր պիտի ու-
նենամ պատմելու... (Կաստուկ ներս կը մտնէ,
ձեռքը քրքեայ գլանիկ մը ունենալով):

Կաստուկ... — Պապարտ, ահա դարձած (ձեռնակի)
Հանգիպեցայ ընկերներուդ, որոնք ստուէն
դուրս կ'եննին:

Պաշտոն. — Ջննդագրութիւններդ ըրի՛ր բարեկաւ-
միդ տունը:

Կատտոն. — Լաւագոյնը եղաւ, նա ինձ յանձ-
նեց գծագրութեան օրինակը: որպէս զի հանձ-
նագրամբն ուսումնասիրեմ՝ զայն գրասենեկիս
մէջ (բռնորդ բաժնաւոր): Ահաւասիկ... և դու
Պաշտոն, բացակայութեանս միջոց, ըսածիս
վրայ խորհրդածոցի՛ր,

Պաշտոն. — Խորհրդածոցի:

Կատտոն. — Գու խորհրդածութիւններդ գաւ-
ղափարներդ չփոխեցի՛ն...

Պաշտոն. — Առաջուրե՛ն աւելի որոշած եմ ա-
նոնց հետեւելու:

Կատտոն (յժկումակ զգացմամբ). — Կամ լաւ
եւ՝ վատ ընկերացոյ տխուր ներշնչութիւններուն
հետեւելու: Իսէ, Պաշտոն, երբոր ուզեցի ես դի-
մարդիւ, վիճարանութիւնը քու տաք զխորդ
և իմ եղբայրական սրտիս մէջն էր միայն,
սակայն քու կեղծ բարեկամներդ իրենց չար
խորհուրդներով միտքդ պղտորեցին, որով իմ
խօսքերս այլ ևս ազդեցութիւն չունին քու
վրայդ:

Պաշտոն. — Ո՛հ, կը կարծես դու, Կատտոն, որ
ես այն աստիճան չճաննամ քու սիրտդ և
քու գորովդ, որ զանոնք զոհեմ որ և է բա-
րեկամութեան:

Կատտոն. — Եւ սակայն այդ է բրածոյ, առանց
քու տկարութեանդ վրայ անորադառնալու:

Պաշտոն. — Հաւատա՛ս ինձ, Կատտոն, որ ես խո-
րին երախտագիտութիւն մը կը զգամ բոլոր
քու լաւութեանդ համար, որոնցմով պաշտ-
պանեցիք անդադար իմ մանկութիւնս: Մին-
չև ցայսօր, դու ամեն բան ըրի՛ր ինծի համար,
արդարացի չէ՞ ուրեմն, որ ես ալ մտածեմ իմ
կարգիս օգտակար ըլլալ քեզի՝ վաճառական
նութիւնը միթէ՞ պատուաբեր կացութիւն մը
չէ՞:

Կատտոն. — Չայդ չունի՛ս եղբորդ քով:

Պաշտոն. — Բնաւ. թոյունը իր թնեքը պար-
զելու համար պէտք է որ հակթիւն կեղևը
կտորէ:

Կատտոն. — Բայց եթէ թեքը զօրանալէն ա-
ռաջ կեղևը կտորէ, թոյունը վար կ'իսկնայ
և կը ստեղծի Նոյն բանը կրնայ քեզի ալ
հանդիպիլ, սիրելիդ իմ Պաշտոն:

Պաշտոն. — Պէտք չէ՞ որ ամեն մարդ իր ան-
ձին փորձովը խրատուի:

Կատտոն. — Աստուած պահէ գթեց թշուառու-
թեան աւաղելի փորձառութիւնէն: Տէ՛ս եղ-
բայր, դու այնքան անգոր ես որ պիտի ընկ-
նուրք բաղդին ամենափոքր հարուածէն, և ես
հոս պիտի չըլլամ զժբաղդաբար, քեզի ձեռք
կարկառելու համար:

Պաշտոն. — Բաղդին յաղթելու համար՝ անոր
հարուածոց դէմ ինքզինքը ամրապնդուել է:

Կատտոն. — Քանի որ իմ ջանքերս կը խոր-
տակունի քու հոգեւոր յամառութեան առջև,
ու այլ ևս չեմ կարող քու ընկերներուդ նեն-
գաւոր հրապոյրներուն և ընթերցմանդ ցա-
ւալի ազդեցութեան դէմ դնել, ինծի ուրիշ
բան չի մնար եթէ ոչ՝ ողբալ քու կուրտութիւնդ:

Պաշտոն. — Ապահով եղիր, Կատտոն, որ ամեն
տեղ և միշտ մարտիս առջև պիտի ունենամ եղ-
բորդ սէշն ու խրատները:

Կատտոն (տեսնելով զհրաջը՝ իր ձեռքը կ'առ-
նու). — Այո, այսօրինակ գրքեր՝ քեզ շուտով
մոռցնել պիտի տան ամեն բան (յիս բնեթա-
նելուս վերնագիրը): Վերստանական և ինզ-
կատակ պատմութիւններ, որոնք չիտուած են
պարագայիդեքը գուրացանելու և տղայոց
միտքը խանգարելու համար: Այս գիրքը կըր-
նայ քեզի պէս ընել, տարածել իր թեքը և
ճամբորդել ուր որ ուզէ (կը նկատ քայն պա-
տուհանէն դուրս):

Պաշտոն (շտապաւ). — Կատտոն, այդ գիրքը
իմ չէ՞:

Կատտոն. — Որո՛ւ հոգ, թող երթայ իր տէրը
զտնէ, ես աշխատելու կ'երթամ. (կը մտնէ
իր աշխատանքը):

ՏԵՄԻԼ ԵՕԹՆԵՐՈՐԴ

ՊԱՆՈՒՄ (Պատուհանէն աւել)

Տէ՛ս, ահա գիրքը մէկու մը գլխուն ինկեր է...
բազմութիւնը կը խոնի մեր պատուհանին
տակ... մատով ցոյց կու տան... նաւաստի
մը տարօրինակ շարժումներ կ'ընէ, կատաղած
է նա... Երկու հոգի են... մեր տունը կը
մտնեն: (կը վազէ կիսարագ զրան մօտ և
ականջ կը դնէ): Կը (սեմ սանդուղէն վեր
կ'եննեն... ահա հասան ինչպէս քսեմ ծա-
մանակն է փախչելու... (Իր մտէն բազմացիւ
տակ և կը ծածկուի): Անգրէ Մարսէյիէ վե-
րաջառնալով՝ ներս կը մտնէ):

ՏԵՄԻԼ ՈՒԹԵՐՈՐԴ

ԱՆԴՐԷ, ՊԱՆՈՒՄ (ծածկուած)

Անգրէ (դռնէն, զաւառական լեզուով). — Օ՛,
գաճճեմս, առջևի կայմին՝ վերջի առագաստ
տակալ փայտին ծայրը հասաւ... պիտի կը-
ռուիմ... է՛յ, է՛յ, դիմացս ելէք... զազա՛-
նեք... անապատ դարձեր է՛, տմենն ալ ծա-
կերը փախեր են... ծօ՛, մէկը դուրս ենէ...
հոս կամքիմ վրայ...:

Պաշտոն (ցած ձայնով, ծածկուած տեղիւ). —
Վայ ինձ, եթէ զիս տեսնէ...:

Անգրէ. — Անծից արժանի անուն, մէկն ալ
չկայ այս տան մէջ՝ որ հետը խօսիմ:

Պաշտոն. — Ո՛հ, հոս է աշակողմ, ձախակողմ...
Անգրէ. — Ահ, հոս է աշակողմ, ձախակողմ...

արմատ անծից... փողը հնչէ, օ՛ն անդր յա-
ռաջ մեծ թթմուկը (իր բանցիկով կը զարնէ
կտր սեղանին վրայ):

Պաշտոն. — Ինչ ազնիւ վարմունք, ինչ ախոր-
ժելի կերպեր ընկերութեան մը մէջ ներկայա-
նալու համար... (Կատտոն կը մտնէ շտա-
պաւ):

ՏԵՍԻԼ ԻՆՆԵՐՈՐԻ

Անտրե, ԿԱՍՏՈՆ, ՊԱՆՈՒՍ (ժամկուսած), յիտոյ
ՓԵՐՈՒՆԵՍ ՆԱԽԱԳԵՍԵՐ

Կաստոն. — Ի՞նչ է այս դժոխային աղմուկը:
Անդրե. — Փո՛ւճ կենդանի, չո՛ւտ անձնատուր
նդիր:

Կաստոն. — Ո՛վ ես դու, ի՞նչ կ'ուզես. Նաւա-
պետը ննրա կը մտնէ:
Անդրե. — Հնրն անիծած... Թող նաւապետը
քծգ խնդիրը բացատրէ:

Նաւապետ. — Լաւ Անդրե, դու փութաւ երթաւ
և երկաթուղոյ բաժ ին մէջ տեղ մը բռնել:
Անդրե. — Կը թռչիմ շուտով, տէր նաւապետ,
(ծիծաղաբարձ ինրպոյզ կը բարեկ ու կը
մեկնի):

Կաստոն. — Կը փափաքէի գիտնալ...:

Նաւապետ. — Հոս գալուս պատճառը այս է,
պարտնիկ, (ցոյց տալով դիրքը): Կը փափա-
քի՞մ ծանօթանալ այս ծիծառ գրքին տիրոջ
հետ:

Պաւղոս (ցոյցիս դռնը հանելով). — Խթո՛ւք
գրքը, ծիծառ գո՛ւ ես... (Նաւապետը կը
դանակայ յետու և Պաւղոս կը ծածկուի):

Կաստոն. — Ինչպէս, պարոն, այս գիրքը...:

Նաւապետ. — Անի՛ց անցաւ (ցոյց տալով իր
պատուհանը) և ուղղակի եկաւ զիտու վրայ
ինկաւ:

Կաստոն. — Ստուգիւ պարոն... հաւատացէ՛ք
որ մեծ ցաւ է ինձ այդ:

Նաւապետ. — Եթէ խոյր գնդակ մ'եղած ըլ-
լար սա, մնաս բարով, բանս վատ էր:

Կաստոն. — Պարոն, յիշա՛ի, մեծապէս վշտա-
ցած եմ այդ դիպուածին վրայ, որուն հա-
մար ձեզմէ ներուժի կը խնդրեմ:

Նաւապետ (ցած). — Ո՛ր երկինք, այս երիտա-
սարդին կերպարանքը իմ վրաս ազդեցութիւն
մը կ'ընէ... այո՛, այո՛... զարմանալի՛ բան,
ինչ նմանութիւն (բարձր) Բայց լաւ որ,
կ'ըսեմ, թուղթի ծրար մ'է նետուածը և ոչ
ուրիշ բան:

Կաստոն. — Անով իմ յանցանքս չի թեթեւար,
պարոն, որ անուշադիր գտնուեցայ: Կը նե-
րես ինծի աշնպէս չէ...

Նաւապետ (ցած). — Ո՛րչափ կը մտածեմ, այն-
չափ աւելի կը թուի ինձ թէ պիտի ճանչ-
նամ... բայց անոք երկուք էին... (բարձր)
Այո՛, այո՛, պարտնիկ, քու կերպարանքդ ինձ
ստորմէնի է, և դու լաւ երիտասարդ մը կ'ե-
րկես:

Պաւղոս. — Տնո՛ւ թէ ինչպէս կը կազդեայ:

Կաստոն. — Ազնիւ էք պարոն, յանձնուս շնոր-
հակա՛յ կ'ըլլամ ձեզ:

Նաւապետ (ցած). — Ո՛հ, այս դիմագիծը...
այս մայնը, ոչ, պատրանք մ'է: (բարձր) Ան
բարեկամ, ահա քու գիրքը:

Կաստոն. — Պարոն, ինձ շնորհ մ'ըրած կ'ըլ-
լա՞ք, եթէ զայն պահելու համար:

Նաւապետ. — Շատ լաւ, կ'ըրդնում քեզ պա-
հելու զայս քեզմէ իբրեւ յիշատակ մը:

Պաւղոս (յոռնա երկնով ծածկուած տեղիէ). —
Ի՛նչ համարձակութիւն. կը ներք պարոն,
այս գիրքը մերը չէ:

Նաւապետ. — Ա՛յո ուսկից բուսաւ...

Պաւղոս. — Այն անկեան մէջ կը խորհրդածէի
ես:

Կաստոն. — Եղբայրս է:

Նաւապետ. (ցած). — Իր եղբայրը... Ո՛հ, ըլլ-
լայ թէ... (բարձր) Որդեակք, դուք երկուք-
նիդ ալ սիրուն եղբայրներ էք:

Պաւղոս. — Գիտես, Պարոն, Նաւապետ, դեւ-
պան մը ունիս որ շատ սիրուն չէ... այն նա-
ւաստին... Տէ՛ր Աստուած, ի՞նչ անճոռնի է...

Նաւապետ. — Բարուրութեան մէջ էր, սիրելիս:

Պաւղոս. — Նա սոսկալի կերպով վաղցուց գիտ:

Նաւապետ. — Անփորձ հասակ, դուք երկու
սիրուն եղբայրներ էք, շատ կը բաղձամ ձեզի
բարեկամ ըլլալ:

Պաւղոս. — Աղո՛ր դժուարութիւն մը չկայ, և
գուցէ կրնայ օգտակար ալ ըլլալ:

Նաւապետ. — Շատ լաւ, ուրեմն, կ'ընդունի՞ք
գիտ ձեր բարեկամը:

Կաստոն. — Երջանիկ եւք պարոն...

Պաւղոս. — Համաձայնութեամբ ընդունելի եւ
դաւ...

Նաւապետ (անարեւելի տեղիէով). — Ուրախ
եմ երկու նոր բարեկամներ ունենալուս հա-
մար. ի՛նչ է ձեր անունը:

Պաւղոս. — Ինքն՝ Կաստոն, և ես Պաւղոս:

Նաւապետ. — Ազա՛ծ ձեր մականունը:

Կաստոն. — Զա՛ն գիտնալու բաղդը՝ մենք եր-
բէք չենք ունեցել:

Պաւղոս. — Իս ալ մտադիր եմ բոլոր երկիրս
շրջել զայն իմանալու համար:

Նաւապետ. — Ո՛րք էք... ինե՛ք տղաք:

Պաւղոս. — Այո՛, բայց հիմայ այնչափ չէ, քա-
նի որ դուք ալ մեր ընտանիքէն եղաք:

Կաստոն. — Պարոն, դուք շատ ազնիւ էք... և
ահա իրօք, ինձ քաղցր և գորովալիք վստա-
հութիւն մը կը ներշնչէք, ինչպէս թէ հայրս
ըլլայիք:

Նաւապետ. — Բայց վերջապէս ձեր ծնողքը:

Կաստոն. — Մեր ծնողքը... Ահաւստիկ պատ-
մութիւնը: Մենք շատ փոքր տղայ էինք...
Մեկնելով զգիտեմ ուսկից, ալէկոճութիւն մը

գտնեք Բերտանիոյ ծովեզերքը ձեզց: Նաւը բո-
լորովին բնկեցանաւ. նաւաստի մը գտնեք մին-
չ և ցամաքը հանեց: Ի՛նչ կին մը գտնեք իր
քոջն առաւ և մայրութիւն ըրաւ մեզի:

Նաւապետ. — Եւ այն բարի կ'ընր:

Պաւղոս. — Մե՛նաւ, և իր հոգին երկինքն է...

Կաստոն. — Մահուան ատեն, մեզի փոքր Ժա-
ռանգութիւն մը թողուց, որ նոստարի մը

տրուելով՝ կը բաւէ բոլոր մեր պիտոյիցը:

Նաւապետ. — Ինե՛ք տղաք, ձեր պատմութիւնը
խորապէս յուզեց սիրտս: Եւ ըսել թէ գիրք
մը գլխուս վրայ կ'ինկնայ, կը վազեմ և կը
գտնեմ գիտ ձեզի պէս երկու ազնիւ բարեկամ-
ներու մօտ... Նախախնամութիւնն է որ գիտ
հոս բերաւ:

Պաւղոս. — Այո՛, այդ ստորդ է...:

Նաւասպետ. — Դուք իրարու հետ սիրով միա-
ցեալ երկու եղբայրներ էք, այնպէս չէ՛:
Պաւղոս. — Երբեմն իրարու հետ կը հակաճա-
ռենք:

Կաստուն. — ձիւդ վիճաբանութեան մը հետեւանք
էր որ դժկամակ վայրկեանի մը մէջ, առի այդ
գիրքը և պատուհանն զուրս նետեցի:

Նաւասպետ. — Ձեմ բմբուներ այդ, ի սէր Աստու-
ծոյ... չէի ուզեր որ բնաւ վէճ ըլլայ ձեր մէջ:
Պաւղոս. — ձերչ իմ ալ ուզածս, ահա ուղիղ
խօսքը:

Կաստուն. — Մեր վիճաբանութեան դատաւոր
կ'ընտրեմ գձգը: Պաւղոս և ես, երջանիկ ենք
ի միասին: Ես կ'աշխատեմ և հետամուտ եմ
նպատակի մը հասնելու... (նաւասպետը մերթ
յմերթ մտքը հաւանութեան նշան կու տայ):
Նոյնպէս Պաւղոս ալ կրնայ իր խելքովն ինձ
մանկի: Բայց ահա ճամբորդելու, աշխարհք
չըլնելու փափաքը վառեցաւ յանկարծ իր սրը-
տին մէջ, որով կ'ուզէ թողուլ զիս իր եղբայ-
րը: Ես բոլոր ուժովս կ'ընդդիմանամ իրեն
այդ անձնակամ մտածութեանը:

Նաւասպետ. — Ինչ գործ ընտրած ես, Կաստուն:
Կաստուն. — Փորագործեան վրայ կ'աշխատեմ:
Նաւասպետ. — Իսկ դ՞ու Պաւղոս:

Պաւղոս. — Ես զբաղում մը չունիմ... փորա-
գրիչ ալ չեմ ուզեր ըլլալ:

Նաւասպետ. — Զարմանք, մարգս ձեռքեր ունի
որոնք աշխատելու համար են:

Պաւղոս. — Բայց ստքեր ալ ունի, որոնք չըր-
ջելու համար են:

Նաւասպետ. — Դու, ուրեմն, չըլի՛ կ'ուզես...:

Պաւղոս. — Այո... Զեր արուեստն ի՞նչէ, պարոն:

Նաւասպետ. — Ես, սիրելիս, Նաւասպետ եմ,
հրամանատար ժան-Պարի:

Պաւղոս. — Գեղեցիկ վիճակ:

Նաւասպետ. — Այլաբար ամեն շըլքեր եմ. երկրիս
վրայ չկայ ամենափոքր անկիւն մ'ալ ուր զիս
ճանչցող ըլլայ, և ես քեզի կ'ըսեմ, որ բո-
լոր իմ ճամբորդութեանցս մէջ՝ բնաւ հանգի-
պում մը չունեցայ որ զիս այնչափ ուրա-
խացնէր ինչպէս այսօր:

Կաստուն. — Շնորհակալ եմ, պարոն:

Նաւասպետ (Պաւղոսի ուղղելով խօսքը). — Եւ
եթէ իմ պատանկութեանս մէջ Կաստունի պէս
եղբայր մը ունեցած ըլլայի, հաւատացիր, որ
աւելի խաղաղ կեանքը կ'ընտրէի և իրեն հետ
կը մնայի:

Պաւղոս. — Այն վիճակին մէջ կ'ուզէի տեսնել
գձգը, բնաւ իսկ տեղափոխութիւն մը չ'ընելով:
Ես Հաւրն անգամ չեմ գնացեր... տեսած չեմ
ծովը: (Յանձնակալատար մը ներս կը մտնէ):

Յանձնակալատար (ձեռքը բռնող մը). — Հոս է
պարոն Պաւղոսը:

Պաւղոս. — Ահաւասիկ եմ (բուրբի կ'աւանդ,
Նաւասպետին կ'ըսէ) Զեր հրամանովը (կը
կարդայ):

Նաւասպետ (Կաստունին դարձած). — Կաստուն
քանի որ կ'ուզէ, թող գինքը որ մեկնի, թող
զգկանք և նեղութիւն կրէ ու զառն փորձա-
ռութիւնը իրեն խրատ ըլլայ:

Պաւղոս. — Եղբայր, Բարիգու մէկ վաճառա-
տան մը յանձնարարութիւնն է որ ինձի կու
տայ Հաւրի մէջ իր ունեցած գործոց հոգա-
տարութիւնը:

Յանձնակալատար. — Պարոն, պատասխան մը
ունի՞ք:

Պաւղոս. — Կ'ըսես որ ինքը անձամբ պիտի գայ
պատասխանելու: (Յանձնակալատար կը մեկ-
նի):

Կաստուն. — Ինչ, Պաւղոս, կը խորհիս իրօք,
այնքան փութով զիս թողու:

Պաւղոս. — Այսօր իսկ... ո՛հ, ճամբորդել,
ճամբորդել, իմ սրտիս միայն իրձը, կեանքիս
երազը:

Նաւասպետ. — Երազ մը որ շատ չուտ պիտի
վերջանայ, բարեկամ: Կաստուն, իրեն պէս
ըրէ, առանց ցաւելու թող որ մեկնի: Միայն
Փերկովն Նաւասպետը մի մոռնար: Դարձեալ
գիրար պիտի տեսնենք. և դու Պաւղոս, քեզ
մնաս բարով չեմ ըսեր, այլ ցտեսութիւն. և
այն՝ քու կարծածէդ չուտ պիտի ըլլայ: (Եր-
կու երարոյց ձեռքիւն կ'աւանդ և սրտայայտ
նայնով մը) Մնաք բարով... բարով մնաք:
(կը մեկնի):

ՏԵՍԻՆ ՏԱՄԵՐՈՐԻ

Պաւղոս, Կաստուն

Կաստուն. — Ուրեմն բոլորովն՝ որոշած ես,
Պաւղոս:

Պաւղոս. — Բոլորովին որոշած, Կաստուն...
այո՛, չուտով յանձնարարութիւններդ ըրէ ինձ:

Կաստուն. — Է՛հ, քանի որ կ'ուզես, մեկնէ...
իմ իրձեան ամեն տեղ քեզ պիտի ընկերանան...

Պաւղոս. — Պաւղոս մը որ յանձնեմ քեզի պատուոյ և ուղ-
ղութեան օրէնքին միշտ հաւատարիմ գտնուիս:

Պաւղոս. — Այսօր եղիր անոնց նկատմամբ:
Կաստուն. — Այո, խոհմութիւնը ձեռքէ մի
թողուր, աչքերդ ստեղծ երկինք վերցուր և
յիշէ եղբայրդ: (կու տայ իրեն բոլորապակաս
մը) Ա՛հ, ահա մեր ինչպիսի դրամը: Ասոնք
բաւական պիտի ըլլան քու պէտքերուդ, բայց
ոչ հաճոյիցդ: Երբեմն կարծես չաւերտու և
մասն հանէ (կը սեղմէ եղբոր ձեռքիւն):

Պաւղոս. — Մնաս բարով եղբայր, մնաս բա-
րով... (Կաստուն կը բողոք էղբոր ձեռքը և
կ'իյնկնայ բազմոցին վրայ, իսկ Պաւղոս իր
աչքերը սրբելով դուրս կ'ընէ):

ՏԵՍԻՆ ՄԵՏԱՄԱՆԵՐՈՐԻ

Կաստուն

(Զեռքերը գլխուն դրած կը կենայ քանի մը
մանկերկրոյ ընկերմէս ցաւոյ մէջ. այրեալ
կը ձեւացնէ, կ'ընէ, աչքերը կը շրջի տալիս
անդին): Աստուած իմ, մեկնեցաւ... և ես մի-
նակ մնացի... (դուրս կ'ընէ և կը մտնէ իր
գործաւորը և վարպետը կ'իյնէ):

Վերջ Առաջին Արարութիւն

Թղթ. Հ. ՅԱՆՈՐԱ ՏԻՐՈՅԵԱՆ